



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

18 մայիսի 2017 թվականի N 20

2. ԾԵՐԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ՝

1) ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրին՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Համաձայն սույն արձանագրային որոշման N 2 հավելվածի՝ պատասխանատու կատարող հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր իշխանության և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ներկայացնել տեղեկատվություն սույն արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ ամփոփել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված մարմիններից ստացված

տեղեկատվությունը և մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն սույն արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. մայիսի 19
Երևան



**ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԾԵՐԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԵՑՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**

I. Ներածություն

1. Բնակչության ծերացման հետևանքների հաղթահարումը, ինչպես նաև տարեցների սոցիալական պաշտպանության խնդիրները պետության սոցիալական քաղաքականության գերակա ուղղություններից են:

2. Եթե երկու տասնամյակ առաջ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել էր միայն տարեցների սոցիալական կարիքների, մասնավորապես՝ նյութական ապահովման բավարարմանն ուղղված քաղաքականություն, ապա այժմ ընդունում ենք, որ տարեց բնակչության պահանջմունքների սպեկտրը պետք է դիտարկել ավելի բազմաշերտ և բազմազան՝ պայմանավորված ժամանակակից զարգացած երկրների փորձի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության մեծացման, մարդկանց գիտակցական մակարդակի բարձրացման և այլ գործոնների հետ:

3. Աշխարհի հետ համընթաց քայլերու հրամայականը մեզ ստիպում է տարեցների սոցիալական պաշտպանության բնագավառում փոխել մարտավարությունը՝ մինչ այժմ առաջնահերթ համարվող՝ տարեցների սոցիալական պաշտպանությունից ու խնամքից անցում կատարել (պահպանելով, իհարկե, նաև այդ բաղադրիչը) դեպի առողջ և ակտիվ կենսակերպ վարելով ծերացմանն ուղղված գործողությունների իրականացում: Դա հնարավորություն է տալիս, որ մարդիկ հասկանան և օգտագործեն իրենց ֆիզիկական, սոցիալական և մտավոր ներուժը ողջ կյանքի ընթացքում և մասնակցեն հասարակական կյանքին՝ ըստ իրենց նախասիրությունների և հնարավորությունների:

II. Առկա իրավիճակի վերլուծություն

4. Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, ծնելիության անկումն ու միգրացիոն հոսքերը հանգեցրել են նրան, որ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատունակ բնակչությունը (16-62 տարեկան) կազմում է ՀՀ մշտական բնակչության ընդհանուր թվաքանակի (2 995,1 մլն) 66.3%-ը, աշխատունակ տարիքից ցածրը (0-15 տարեկան)՝ 20.8%-ը, իսկ 63 տարեկան և բարձր տարիքի մարդկանց թիվը կազմում է մշտական բնակչության ընդհանուր թվի 12.9%-ը (387 659 մարդ): 65 տարին լրացած անձանց թիվը կազմում է 323 100 կամ բնակչության ընդհանուր թվի 10.8%-ը:

5. Բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցների թվի ավելացման միտում է նկատվում: Այսպես, 2011 թվականի դրությամբ ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում 63 և բարձր տարիքի անձանց թիվը կազմել է 11,5 % (376 100 մարդ): Տարեցների թվաքանակի աճը բնակչության ընդհանուր թվաքանակում վերջին 5 տարվա ընթացքում կազմել է 1,4 % կամ 11559 մարդ:

6. Այսպիսով, Հայաստանը հայտնվել է ծերացող հասարակությունների վերին շեմին: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կանխատեսումները վկայում են, որ Հայաստանը շուտով կհատի այդ շեմը, իսկ 2050թ-ին 65-ից բարձր տարիք ունեցողները կկազմեն բնակչության 22-23%-ը:

7. ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում, որի բաղադրիչներից է տարեցների սոցիալական պաշտպանությունը, վերջին 3-4 տարվա ընթացքում տեղի են ունեցել կարևորագույն բարեփոխումներ:

8. Պարբերաբար վերանայվել և կատարելագործվել է ոլորտի օրենսդրությունը, կատարվել են ինստիտուցիոնալ փոփոխություններ: Հասարակության սոցիալական կյանքում էական նշանակություն ունեցավ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ստեղծումը:

9. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնները, որոնք ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման հիմնական սուբյեկտներն են, իրապես կարող են ազդել բնակչությանը տրամադրող ծառայությունների որակի և արդյունավետության վրա: Վերջիններիս շնորհիվ համապատասխան մասնագետները կարողանում են արձագանքել բնակչության տարբեր խմբերի, այդ թվում՝ տարեցների, հիմնախնդիրներին և նպաստել համայնքային մակարդակում տարեցներին անհատական, գնահատված կարիքից բխող, սոցիալական ծառայությունների տրամադրմանը:

10. Որպես կարևորագույն ձեռքբերում, կարելի է դիտարկել նաև սոցիալական համագործակցության գաղափարի ներդրումը ու դրա շրջանակում համագործակցության համաձայնագրերի կնքումը՝ ինչպես ազգային, այնպես էլ տարածքային մակարդակներում:

11. Առավել ուշադրություն է դարձվում տարեցների առողջության պահպանման վրա, մասնավորապես՝ կազմակերպվում է տարեց մարդկանց, պետության կողմից երաշխավորված, անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունն ու սպասարկումը (ներառյալ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների և նեղ մասնագիտական ծառայությունների իրականացումը), համաձայն գործող չափորոշիչների:

12. Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում որդեգրվել է ծառայությունների տրամադրումն՝ ըստ գնահատված կարիքների, սկզբունքը:

13. Այսօր Հայաստանում գործում է տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներ ունեցող) անձանց շուրջօրյա խնամքի ծառայություն մատուցող 11 հաստատություն (տուն-ինտերնատ, խնամքի կենտրոն, խնամքի տուն), այդ թվում՝ 6 ոչ պետական: Բոլոր հաստատություններում միասին բնակվում է շուրջ 1370 մարդ, իսկ տնային պայմաններում սպասարկվում է շուրջ 4000 մարդ, ցերեկային կենտրոններ են այցելում 2040-ը: Բացի այդ, Երևանի անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում ապաստանում է միաժամանակ 100 անօթևան, իսկ հանրապետության 4 սոցիալական տներում բնակվում և ծառայություններ է ստանում 60 տարեց անձ:

14. 2016 թվականին ՀՀ մարզերում և Երևան քաղաքում իրականացվեց տարեցների սոցիալական կարիքների գնահատման և սոցիալական ծառայություններ տրամադրելու նոր մոդելների նկատմամբ նրանց պահանջարկի ուսումնասիրություն, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվեց խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպությունների մշտադիտարկումը:

III. Ոլորտում առկա խնդիրները

15. Չնայած ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում վերջին տարիներին իրականացված բազմաթիվ ծրագրերին, միջոցառումներին, ընդունված իրավական ակտերին, դեռևս ոլորտում առկա են բազում խնդիրներ, որոնց մի մասն, ի դեպ, ի հայտ եկան վերը նշված ուսումնասիրության արդյունքում:

16. Մասնավորապես.

1) տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում գործող սոցիալական ծառայությունների տրամադրման ներկա համակարգի կողմից՝ տարեցների սոցիալ-հոգեբանական, իրավական, առողջապահական, բնակարանային ապահովության կարիքներն ամբողջ ծավալով բավարարելու անկարողությունը.

2) տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունների աշխարհագրորեն անհամաչափ բաշխվածությունը (դրանք հիմնականում տեղակայված են քաղաքային համայնքներում և սպասարկում են սահմանափակ թվով տարեցների).

3) Հայաստանում տարեցների ակտիվության ցուցանիշների ամբողջական հավաքագրման մեխանիզմի բացակայությունը. (ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական բաժանմունքի կողմից տարածաշրջանի երկրների տարեցների ակտիվության իրավիճակի գնահատման համար առաջարկված թվով 22 հիմնական ցուցանիշներով բնութագրվում են տարեցների զբաղվածության մակարդակը, նրանց մասնակցությունը հասարակական կյանքին, անկախ, առողջ և անվտանգ կյանքը, տարեցների ակտիվ կենսաակերպ վարելու համար հնարավորություններն ու բարենպաստ միջավայրը: Հայաստանի վարչական և հետազոտական տվյալների աղբյուրներով ներկայումս հավաքագրվում է ընդամենը 11 ցուցանիշ: Քանի որ ժամանակակից հասարակություններում տարեցների ակտիվության ցուցանիշները համարվում են անհրաժեշտ գործիք տարեց մարդկանց ներուժի չափման համար, ուստի, Հայաստանում բացակայող ցուցանիշների մասով անհրաժեշտ է հնարավորություններ ձևավորել դրանց հաշվարկի և պարբերական գնահատման համար, օգտագործելով այդ ուղղությամբ առկա միջազգային փորձը).

4) խնամքի կարիք ունեցող տարեցներին մատուցվող սոցիալական և առողջապահական ծառայությունների ոչ բավարար որակը և մատչելիությունը.

5) ծերաբուժական և բուժքույրական նեղ մասնագիտացված ծառայությունների բացակայությունը.

6) տարեցների՝ սեփական իրավունքների և գործող ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը.

7) տարեցների՝ առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի բացակայությունը.

8) պետական և համայնքային մակարդակներում որոշումների կայացմանը տարեցների մասնակցության ապահովման մեխանիզմների բացակայությունը.

9) տարեցներին պատշաճ ծառայություններ մատուցելու համար պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստացվող ֆինանսավորման ոչ բավարար լինելը.

10) պետական և ոչ պետական մարմինների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների տրամադրման գործընթացում միասնական մոտեցումների, ընդհանուր նվազագույն չափորոշիչների և կարգավորումների համակարգի ոչ լիարժեք լինելը.

11) պետության կողմից ոչ պետական կազմակերպություններին տարեցների խնամքի և աջակցության ծառայությունների պատվիրակման բավարար ռեսուրսների և «մրցակցային» մեխանիզմների բացակայությունը.

12) տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների վճարովի և համավճարի սկզբունքով տրամադրման մեխանիզմների ու իրավական կարգավորումների ոչ բավարար լինելը:

IV. Միջազգային մոտեցումներ

17. Առողջ ու ակտիվ երկարակեցության գաղափարը աշխարհում ճանաչում ձեռք բերեց 1980-ականների վերջերին: Ըստ ծերաբույժների, այն իր մեջ ներառում է՝

- 1) ֆիզիկական առողջությունը.
- 2) ֆինանսական ապահովությունը.
- 3) արդյունավետությունն ու զբաղվածությունը.
- 4) անկախությունը.
- 5) լավատեսությունը.
- 6) հասարակական կյանքում ներգրավվածությունը:

18. Ծերացման խնդիրների լուծման միջազգային մոտեցման հիմքում ընկած են հետևյալ հիմնական սկզբունքները.

1) մարդու իրավունքներ, այդ թվում՝ տարեցների իրավունքը սոցիալապես ակտիվ լինելու, առողջության հնարավոր ամենաբարձր մակարդակն ունենալու և դրա աստիճանական իրացումը վերահսկելու,

2) կանանց և տղամարդկանց իրավահավասարություն,

3) հավասարություն և խտրականության բացակայություն՝ հատկապես տարիքային,

4) արդարություն (հավասար հնարավորություններ առողջ ծերացման որոշիչ գործոնների (դետերմինանտների) առումով, անկախ սոցիալական կամ տնտեսական կարգավիճակից, ծննդավայրից, բնակության վայրից կամ այլ որոշիչ գործոններից),

5) սերունդների համերաշխություն (սերունդների միջև սոցիալական համախմբվածություն):

19. Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ տարեցների բարեկեցության ոլորտում կատարված ներդրումները՝ տալիս են սոցիալական և տնտեսական նշանակալի արդյունքներ: Օրինակ, առողջապահության համակարգում կատարված ներդրումները, որոնք համապատասխանում են տարեցների կարիքներին, զարգացնում են նրանց առկա կարողությունները, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս նրանց ավելի ակտիվ ներգրավվածություն և առաջխաղացում ունենալ: Կամ, օրինակ՝ երկարաժամկետ աջակցության ոլորտում արված ներդրումները

օգնում են որոշակի կարողություններից զրկված տարեցներին արժանապատիվ կյանք ունենալ և անընդհատ անհատապես զարգանալ, ինչպես նաև օգնում են նրանց ընտանիքներին խուսափել աղքատությունից, հնարավորություն են տալիս կանանց պահպանել իրենց աշխատանքը և նպաստում են սոցիալական համախմբվածությանը՝ համայնքում ռիսկերի բաշխման միջոցով:

20. Միջազգային մոտեցման մեջ ոչ պակաս կարևոր օղակ է ծերացման ոլորտում գնահատումների, մշտադիտարկումների և հետազոտությունների կատարելագործումը, ինչը ենթադրում է նաև ջանքերի ներդրում փաստացի տվյալների բազայի ստեղծման ուղղությամբ, որը թույլ կտա հասնել ցանկալի արդյունքի և միևնույն ժամանակ կլինի ծախսարդյունավետ:

V. Ռազմավարության նպատակը

21. Ստեղծել բարենպաստ և առողջ միջավայր տարեց մարդկանց համար, ապահովելով նրանց արժանապատիվ ծերացման գործընթացը:

22. Սույն ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել հետևյալ երեք միջազգային քաղաքական փաստաթղթերի հիմնարար դրույթները՝

1) ՄԱԿ-ի «Ծերության խնդիրների վերաբերյալ Մադրիդի միջազգային գործողությունների պլանի ռեզոլուցիոն իրականացման ռազմավարությունը» (2002թ.).

2) Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծերացման և առողջության զեկույցը» (2015 թ.).

3) Վիեննայի նախարարների հռչակագրի չորս հիմնական նպատակները (2012թ.)

23. Վերը նշված փաստաթղթերը հիմնվում են տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի իրավունքի վրա, ընդգծում են տարեցների ներուժն ու փորձը և նրանց պոտենցիալ ներդրումները՝ անկախ ֆիզիկական և մտավոր խոչընդոտներից:

VI. Ռազմավարության գերակայությունները

24. Սույն ռազմավարության գերակայություններն են.

1) խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման ներկա համակարգի կատարելագործում և խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում, վճարովի և համավճարի սկզբունքով խնամքի ծառայությունների տրամադրման համար իրավական կարգավորումների ապահովում.

2) տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի ապահովում՝ տարեց հասակում առողջության, անկախության և արժանապատվության պահպանում.

3) պետության կողմից տարեցների խնամքի ծառայությունները ոչ պետական կազմակերպություններին մրցակցային սկզբունքով պատվիրակման համար անհրաժեշտ հիմքերի և մեխանիզմների ստեղծում.

4) տարեց մարդկանց համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովում.

5) տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող մասնագետների պատրաստում և վերապատրաստում.

6) տարեցների համար առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի ստեղծում.

VII. Մշտադիտարկում և գնահատում

25. Ռազմավարության ներդրման ընթացքում առաջնահերթ ուշադրություն կդարձվի մշտադիտարկման և գնահատման իրականացմանն ու դրա արդյունքների համակողմանի և լիարժեք վերլուծության վրա: Մշտադիտարկումը պետք ուղղված լինի սույն ռազմավարության իրականացման միջոցառումների արդյունավետության գնահատմանը, դրանց իրականացման ընթացքում ծագած խնդիրների հստակեցմանը և հնարավոր լուծումներին:

26. Ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարման գնահատումը պետք է հիմնվի մի քանի աղբյուրների վրա, այն է՝ մոնիթորինգային ցուցանիշների, այլընտրանքային հետազոտությունների, պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծության, ստացված հաշվետվությունների (տարեկան և եռամսյակային), կատարված ուսումնասիրությունների և այլն, որոնց դրական արդյունքները և քաղաժ դասերը կօգտագործվեն տվյալ ռազմավարության շրջանակներում իրականացված ծրագրային միջոցառումների արդյունավետության բարձրացման և հետագա զարգացումների ապահովման համար:

27. 2019 թվականին նախատեսվում է իրականացնել ռազմավարության միջոցառումների կատարման միջանկյալ գնահատում, իսկ 2021 թվականին՝ վերջնական ամփոփիչ գնահատում, ինչի արդյունքում կիրապարակվի համապատասխան հաշվետվություն:

VIII. Տարածաշրջանային և միջոլորտային, ինչպես նաև պետություն - հասարակական կազմակերպությունների - տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության ամրապնդում

28. Ծերացման հիմնախնդիրների լուծման ոլորտում խիստ կարևորվում է համագործակցության շրջանակում ռեսուրսների մեկտեղումը ու համատեղ ծրագրերի մշակումն ու իրականացումը պետություն - հասարակական կազմակերպություններ - տեղական ինքնակառավարման մարմիններ ձևաչափում:

29. Այդ համատեքստում նախատեսվում է ծերացման հարցերին նվիրված գիտաժողովների, սեմինարների, կլոր սեղանների կազմակերպում և իրականացում, ինչպես նաև մասնակցություն միջազգային նմանատիպ միջոցառումներին, ինչը կնպաստի տարածաշրջանային համագործակցության ամրապնդմանն ու տեղեկատվության ու փորձի փոխանակմանը: Նախատեսվում է նաև տարածաշրջանի երկրների միջև համագործակցության զարգացում, փոխայցելություններ, մասնագետների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում և փորձի փոխանակում, համատեղ սոցիալական ծրագրերի իրականացում և այլն:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԾԵՐԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Արդյունքային ցուցանիշները	Պատասխանատու կատարողը (կատարող ները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
<i>Խնամքի և սոցիալական ծառայությունների պրամադրման գործող համակարգի բարելավում</i>						
1.	Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում	Ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի կատարմանն ուղղված աշխատանքների համակարգում	Կկատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 17-ի ՀՀ Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի աշխատակարգը և անհատական կազմը հաստատելու մասին>> N 20-Ա որոշման մեջ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի՝ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում	Ֆինանսավորում չի պահանջվում

<p>2.</p>	<p>Հանրապետությունում տարեցների մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանն ուղղված փորձնական ծրագրերի իրականացում</p>	<p>Տարեցների իրական կարիքների լիարժեք ու բազմակողմանի գնահատման հիման վրա այլընտրանքային ծառայությունների տրամադրման հնարավորությունների ապահովում, մասնավորապես՝ հետևյալ փորձնական ծրագրերի իրականացում. 1) Սոցիալական օգնականի ծառայության ներդրում 2) «Տարեցների առողջ ապրելակերպի և ակտիվ ժամանցի ակումբ-ցերեկային կենտրոնի» ստեղծում 3) Տնային պայմաններում խնամքի տրամադրման ծառայություն՝ ըստ տարեցի գնահատված կարիքների 4) համայնքահեն շուրջօրյա խնամքի տան ստեղծում</p>	<p>1) Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան և Մեղրի համայնքներում սոցիալական օգնականի ծառայությունից կօգտվի 24 տարեց 2) Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում կստեղծվի «Տարեցների առողջ ապրելակերպի և ակտիվ ժամանցի ակումբ-ցերեկային կենտրոն», որի ծառայություններից կօգտվի 20 տարեց 3) Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ և Վայոց ձորի մարզի Վայք և Եղեգնաձոր համայնքներում տնային պայմաններում շուրջօրյա խնամքի ծառայություն կստանա առնվազն 30 անկողնային հիվանդ տարեց անձ 4) Տավուշի մարզի մեկ ընտրված համայնքում</p>	<p>«Տարեցների և սոցիալական հարցերի նախարարություն և համապատասխանաբար՝ Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզպետարաններ, համայնքապետարաններ, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>1) 2018թ. 2) 2019թ. 3) 2019թ. 4) 2021թ.</p>	<p>«Տարեցների և սոցիալական հարցերի նախարարություն և համապատասխանաբար՝ Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզպետարաններ, համայնքապետարաններ, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում: Օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:</p>
-----------	--	--	--	--	---	--

			համայնքահեն շուրջօրյա խնամքի տան ստեղծում առնվազն 10 տարեցի համար			
3.	Տարեցներին մատուցվող ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով իրավական հիմքի ապահովում	Տարեցների խնամքի հաստատություններում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) մատուցվող ծառայությունների կանոնակարգում, խնամքի գործող չափորոշիչների վերանայում (գործող օրենսդրական ակտերի, խնամքի չափորոշիչների վերանայում, նոր ընթացակարգերի, մեթոդական ցուցումների ընդունում և այլն)	ՀՀ կառավարության որոշում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
4.	Տարեցներին մատուցվող տնային խնամքի սոցիալառողջապահական համալիր ծառայությունների ներդրում	ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում կներդրվի տարեցների տնային խնամքի սոցիալառողջապահական ծառայությունների ինտեգրված մոդել	ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տնային խնամքի համալիր ծառայություններից կօգտվի շուրջ 200 տարեց	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, համայնքապետարաններ (համաձայնությամբ), հասարակական	2018թ.	Համայնքային բյուջե և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ

				կազմակերպություններ (համաձայնությամբ)		
5.	Տարեցների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ միջոցառումների իրականացում՝ ըստ նրանց գնահատված կարիքների	Մարզպետարանների և համայնքապետարանների կողմից կգնահատվեն տարեցների կոմունալ-կենցաղային պայմանները և դրան համապատասխան կտրամադրվի աջակցություն, մասնավորապես՝ բնակարանների, կենցաղային տեխնիկայի, սանհանգույցների վերանորոգում, ջեռուցման հետ կապված խնդիրների լուծմանն աջակցություն և այլն)	ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների կողմից յուրաքանչյուր մարզի առնվազն 5 համայնքում բնակվող շուրջ 100 տարեց կստանա համապատասխան աջակցություն	ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ)	2017-2021թթ.	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում:
6.	Միջհամայնքային տրանսպորտային սպասարկման բարելավում	Միջհամայնքային երթուղիների ավելացման շնորհիվ տարեցների համար կապահովվի առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը	Յուրաքանչյուր մարզում միջհամայնքային առնվազն երեք նոր երթուղու ստեղծում կամ առկա երթուղիների համալրում նոր տրանսպորտային միջոցներով:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	2017-2021թթ.	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա

						բյուջետային գործընթացի շրջանակում:
7.	Տարեցների շուրջօրյա խնամքի, տնային պայմաններում խնամքի, ինչպես նաև ցերեկային կենտրոններում վճարովի և համավճարի սկզբունքով ծառայությունների տրամադրման մեխանիզմների սահմանում	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1112-Ն որոշման կիրարկման նպատակով իրավական հիմքերի ստեղծում, մեխանիզմների և ընթացակարգերի սահմանում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հասարակա կան կազմակերպություններ (համաձայնությամբ)	2018թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
8.	Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող (ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրման իրավական հիմքերի ու մեխանիզմների ստեղծում	Տարեց անդամ խնամող ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու հետ կապված հարաբերությունների կանոնակարգում	ՀՀ կառավարության որոշում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2019թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
9.	Երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող	ՀՀ կառավարության սահմանած կարգով սոցիալական աջակցություն	Կգնահատվեն և կհաշվառվեն ընտանիքները, կստանան համապատասխան աջակցություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2020թ.	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի

	(ավելի քան 6 ամիս) ընտանիքի անդամին սոցիալական աջակցության տրամադրում	կտրամադրվի երկարատև խնամքի կարիք ունեցող ընտանիքի տարեց անդամ խնամող ընտանիքներին	ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով			հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում:
10.	Խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման միասնական մեխանիզմների մշակում և ՀՀ-ում գործող պետական և հասարակական կազմակերպությունների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների քարտեզագրում	Կհստակեցվի և կկանոնակարգվի խնամքի կարիք ունեցող տարեցների հայտնաբերման և հաշվառման գործընթացը, ինչպես նաև կքարտեզագրվեն նրանց մատուցվող ծառայությունները: Ստացված տեղեկատվությունը հասանելի կլինի շահագրգիռ բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների համար	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման Ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում կներկայացվեն առաջարկություններ պահանջարկ ունեցող, սակայն տարեցներին չմատուցվող ծառայությունների տրամադրման վերաբերյալ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2018թ.	Օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ
11.	Տարեց և կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրող հասարակական	Հասարակական կազմակերպությունների հետ կկնքվեն սուբսիդիայի պայմանագրեր կամ մրցութային կարգով ծառայությունների գնման	Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների պատվիրակում առնվազն չորս հասարակական կազմակերպության՝	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018թ.	Ֆինանսավորում չի պահանջվում

	կազմակերպությունների հետ սոցիալական համագործակցության մեխանիզմների կիրառում	պայմանագրեր՝ համաձայն գնումների մասին ՀՀ գործող օրենսդրության	մրցակցային սկզբունքով			
12.	Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում իրականացնելու պահանջարկի ու հնարավորության ուսումնասիրություն	Կիրականացվի տարեցների և ընտանիքների ընտրանքային հետազոտություն՝ որպես խնամքի այլընտրանքային մոդել՝ խնամատար ընտանիքներում տարեցներին խնամելու առկա պահանջարկը ուսումնասիրելու և կարիքները գնահատելու համար	Հետազոտության արդյունքների վերաբերյալ կներկայացվեն համապատասխան հաշվետվություն և առաջարկություն՝ խնամատար ընտանիքներում տարեցների խնամքը կազմակերպելու մեխանիզմների վերաբերյալ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ)	2018թ	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում:
13.	Տարեցների խնամքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու համար համապատասխան իրավական հիմքերի ստեղծում, փորձնական ծրագրի մշակում և իրականացում	Փորձնական ծրագրի իրականացման համար Երևան քաղաքում ընտրված առնվազն 10 ընտանիքում կկազմակերպվի 10 տարեցի խնամքը	ՀՀ կառավարության որոշում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2019թ.	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում

<i>Տարեցների առողջության և ակտիվ ապրելակերպի ապահովում՝ տարեց հասակում առողջության, տնտեսական անկախության և արժանապատվության պահպանում</i>						
14.	Տարեցների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ բժշկական օգնության և խնամքի վերաբերյալ հանրային իրազեկում	Տարեցների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով տեղեկատվական թերթիկների, բուկլետների, տպագրություն, հեռուստառադիոհաղորդումների կազմակերպում և այլն:	Յուրաքանչյուր տարի՝ իրազեկման առնվազն 5 միջոցառման իրականացում	«Ղ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Ղ առողջապահության նախարարություն, ԶԼՄ-ներ, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2017-2021թթ.	«Ղ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում:
15.	55 և ավելի տարիքային խմբերում միզասեռական համախտանիշի, օստիոպարոզի և վերարտադրողական օրգանների քաղցկեղի, այդ թվում՝ կրծքագեղձի վաղ ախտորոշման, սկրինինգային ծրագրերի իրականացում և հայտնաբերված ախտաբանությունների անվճար բուժման կազմակերպում	Բնակչության հիվանդացության բեռի և մահացության ցուցանիշի իջեցում, կյանքի որակի բարելավում և կյանքի տևողության բարձրացում		«Ղ առողջապահության նախարարություն	2018-2021թթ.	«Ղ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում: Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

16.	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար շուրջօրյա խնամքի մասնագիտացված տների ստեղծում	Հանրապետության երկու քաղաքում կստեղծվեն շուրջօրյա խնամքի մասնագիտացված երկու տուն՝ ծերունական փսիխոզով, թուլամտությամբ (Այլցիեյմերի հիվանդություն) տառապող տարեցների համար	Խնամքի մասնագիտացված տները նախատեսվում է ստեղծել Երևանում՝ 30 տեղանոց, և Վանաձորում՝ 20 տեղանոց	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2021թ.	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում: Օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ:
<i>Տարեց մարդկանց համայնքային կյանքին և որոշումների կայացմանը մասնակցության և սոցիալական ներառման ապահովում</i>						
17.	Լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում և այդ շտեմարանում տարեցների լրացուցիչ և շարունակական կրթության մասին տվյալների ընդգրկումը	Տարեցների լրացուցիչ և շարունակական կրթությանը վերաբերող ցուցանիշները կներառվեն լրացուցիչ և շարունակական կրթության տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանում	Տեղեկատվական համակարգը հասանելի կլինի շահագրգիռ պետական և հասարակական կազմակերպությունների համար	ՀՀ կրթություն և գիտության նախարարություն	2017-2021թթ.	Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

18.	Տարեցների համար մշակութային կյանքին մասնակցության ապահովում	Կենսաթոշակառուներին՝ մշակութային ծառայություններից օգտվելու առավել մատչելի պայմանների ապահովում, համայնքներում գործող մշակույթի տներում տարեցների համար նախատեսված խաղասենյակների վերանորոգում և կոմունալ պայմանների բարելավում (ըստ անհրաժեշտության), համայնքների բակերում տարեցների համար զրուցարանների տեղադրում, համայնքներում տարեցների շփման, հաղորդակցման, ժամանցի կազմակերպման համար համապատասխան պայմանների ստեղծում	ՀՀ կառավարության որոշում: Մարզային և համայնքային ծրագրերի հաստատում	ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ)	2018թ.	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում: Օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ:
19.	Տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսում և խթանում	Խրախուսվում է տարեցների ակտիվ կենսակերպը, ստեղծագործական մղումները,	ՀՀ մարզերում և Երևանում գործող թատերահամերգային կազմակերպու-	ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Հասարակական	2017-2021թթ	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի

		ապահովվում ինքնա-իրացման ու ինքնաբավության մակարդակի բարձրացումը: Պրոֆեսիոնալ և սիրողական (ինքնուս) ստեղծագործող տարեցների աշխատանքների ցուցադրություն՝ նրանց մասնակցությամբ ցուցահանդեսների, ֆիլմերի, թատերահամերգային միջոցառումների կազմակերպում:	թյունները, թանգարանները և գրադարանները կիրականացնեն տարեցների շրջանում ստեղծագործական գործունեության խրախուսմանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է առնվազն 5 միջոցառում:	կազմակերպություններ (համաձայնությամբ)		հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում
20.	Տարեցների ներուժի օգտագործում՝ ժողովրդական արհեստների փոխանցում երիտասարդ սերնդին	«Ճ մարզերում տարեցների ստեղծագործ ներուժի օգտագործման միջոցով տարբեր խմբակների ստեղծում՝ մշակույթի տներում կամ դպրոցներում, որտեղ աշակերտներին կամ երիտասարդներին իրենց արվեստն ու արհեստը կուսուցանեն ժողովրդական վարպետները	Արագածոտնի, Վայոց ձորի և Շիրակի մարզերում կստեղծվեն առնվազն 3-ական խմբակ՝ յուրաքանչյուրում 5-ական սովորող	«Ճ մարզպետարաններ, «Ճ մշակույթի նախարարություն, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2017-2021թթ.	«Ճ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում:
21.	Ավագ սերնդի վաստակի գնահատում,	Կանցկացվեն մեծարման երեկոներ՝ նվիր-	Յուրաքանչյուր տարի կիրակա-	«Ճ մարզպետարաններ, համայնքապետարան-	2017-2021թթ	Ֆինանսավորում չի պահանջվում

	<p>միջսերնդային կապերի ամրապնդում, համայնքային կյանքին տարեց մարդկանց մասնակցության ապահովում</p>	<p>վաճ պատերազմի վետերաններին, վաստակաշատ տարեց մարդկանց, որոնցում կներգրավվեն նաև սովորողներ: Տարեցները կմասնակցեն համայնքային կյանքին վերաբերող որոշումների կայացմանը</p>	<p>նացվի վաստակաշատ տարեցների մեծարման առնվազն 5 միջոցառում: ՀՀ համայնքներում կստեղծվեն ավագանիներին կից ավագների խորհուրդներ, յուրաքանչյուր համայնքում 3-5 վաստակաշատ ու փորձառու տարեցի մասնակցությամբ (գործընթացն ամբողջությամբ կիրականացվի 5 տարվա ընթացքում)</p>	<p>ներ (համաձայնությամբ)</p>		
<p>22.</p>	<p>Համայնքներում տարեցների սոցիալական և տնտեսական ակտիվության բարձրացման նպատակով ակտիվ կենսակերպ վարող տարեցների մասնակցությամբ համայնքային խմբերի ստեղծում և աջակցում</p>	<p>ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում ակտիվ տարեցներից կձևավորվեն համայնքային խմբեր</p>	<p>ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում կստեղծվի 20 համայնքային խումբ՝ կազմված ակտիվ տարեցներից, որոնք կամավորական հիմունքներով աջակցություն կցուցաբերեն իրենց հասակակիցներին՝ համապատասխան մասնագետների օգնությամբ</p>	<p>Համայնքապետարաններ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2019թ.</p>	<p>Համայնքային բյուջեներ և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ</p>

Տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող մասնագետների պատրաստում և վերապատրաստում						
23.	Տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող մասնագետների համար վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում	Մասնագետների որակավորման բարձրացում, մասնագիտական կարողությունների զարգացում	Յուրաքանչյուր տարի կվերապատրաստվի տարեցների հետ աշխատող առնվազն 100 մասնագետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2017-2021թթ	ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը կքննարկվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում
Տարեցների համար առավել երկար աշխատանքային կյանքի ապահովման բավարար հիմքերի ստեղծում						
24.	Տարեց անձանց՝ աշխատանքային կյանքում առավել երկար մնալու իրավական հիմքերի և կարգավորումների ապահովում	Առավել երկար աշխատանքային կյանքում մնալու շնորհիվ կապահովվի տարեցների նյութական անկախությունն ու կբարելավվի կենսապայմանները, ինչպես նաև հնարավորություն կընձեռվի նրանց իրենց փորձը փոխանցելու ու մասնագիտական հմտությունները սովորեցնելու երիտասարդներին	ՀՀ աշխատանքային օրենսդրության մեջ կկատարվեն համապատասխան փոփոխություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութ յուն	2020թթ	Ֆինանսավորում չի պահանջվում

